

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Եգիպտոսի Հայոց առաջնորդական տեղապահին Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի համար երկու աշակերտ պատրաստել համեմատ Ճեմարանի ծրագրի և 1914 թ. օգոստոս ամսին ուղարկել ս. Էջմիածին, որպէսզի քննութեամբ ընդունուեն Ճեմարան, տեղական ազգայնոց միջնորդութեան համաձայն: 4 յունուարի, Թ. 14:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Վրաստանի Հայոց Թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին խստիւ արգելել նախկին Աթանագինէ քահանային քահանայագործութիւն անել, որի առթիւ խնդրում է Կ. Պօլսի Հայոց ամենապատիւ Պատրիարքը: 4 յունուարի, Թ. 24:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Գանձակեցի տիկին Եղիսաբէթ Համբարձումեան Մալխասեանցի անունով Վերին-Բարհատ գիւղի հայոց եկեղեցական-ծխական

դպրոցին տարեկան 300-ական ռուբլի նպաստ տալու առթիւ։ 4 յունուարի, թ. 26։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Երևանի փոխ-թեմական Տ. Խորէն եպիսկոպոսին Նորին Վեհափառութեան Բիւրական գիւղի Հայոց եկեղեցական-ծխական դպրոցի օգտին նուիրած մի հարիւր ռուբլի նպաստը և պատուիրուեց յանձնել դպրոցի հոգաբարձութեան։ 4 յունուարի, թ. 28։

Կոնդակ Ուրիաթափան (Վրաստանի թեմ) գիւղի ծխական հոգաբարձութեան անունով, որով արտօնուեց բանալ տեղական եկեղեցու գաւթում Հայոց եկեղեցական-ծխական դպրոց։ 8 յունուարի, թ. 35։

Կոնդակ նոյն իմաստով Վրաստանի թեմի Օնի գիւղի ծխական հոգաբարձութեան անունով։ 8 յունուարի, թ. 36։

Դիւանի գրութեամբ ուղարկելով Կ. Պոլսի Հայոց ամենապատիւ Պատրիարքի անցած դեկտեմբերի 23-ի թ. 1056 գրութեան պատճէնները, յանձնարարուեց Երևանի փոխ-թեմականին, Վրաստանի և Շամախու առաջնորդներին, որ յայտնեն իրենց թեմերում եղած Տաճկահայերին, որ Տաճկաստան անցնելու ժամանակ՝ ունենան ձեռքներին օրինաստացման անցագրեր, որպէսզի սահմանն անցնելու ժամանակ սահմանապահ զօրքի կողմից արգելքների և դժուարութիւնների չ'հանդիպեն։ 8 յունուարի։ թ. թ. 39, 40, 41։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Մինաղին երդուեալ հաւատարմատար պ. Գրիգոր Փ. Զալխուշեանի ուղարկած յօգուտ Դպրոցական Ֆոնդի թ. 13107 փոխանակագիրը՝ 900 ռուբ. գումարի։ 8 յունուարի, թ. 42։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Մինաղին նոյն պ. Գրիգոր Փ. Զալխուշեանի Դրպրոցական Ֆոնդի օգտին փոխադրած 1294 ռուբլի 20 կ. թ. 13272 փոխանակագիրը։ 9 յունուարի, թ. 43։

Կոնդակ ս. Էջմիածնի Մինասի անունով, որով ընդունելով նախկին վարդապետ Աբսէն Դլտճեանի զղջման խնդիրը՝ առաջադրուեց կարգադրել վերադարձնել նորա վարդապետական կոչումը և կարգել Սանահնի վանքի միաբան։ 9 յունուարի, թ. 94։

Կոնդակ Երևանի թեմի Ջրագացներ գիւղի ծխական հոգաբարձութեան անունով, որով թոյլ տրուեց բանալ տեղական եկեղեցու գաւթում հայոց եկեղեցական-ծխական դպրոց։ 20 յունուարի, թ. 126։

Կոնդակ Երևանի Հայոց փոխ-թեմակալի անունով, որով թոյլատրուեց Տաթևի վիճակի Կոտեմնիս գիւղի հայոց ծխական դպրոցը՝ ս. Սահակ և Մեսրոպի յիշատակը յաւերժացնելու համար կոչել. «Կաքաւաբերդի Կենդրոնական ծխական Սահակ-Մեսրոպեան երկդասեան երկսեռ դպրոց»։ 22 յունուարի, թ. 146։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսին յայտնել Վերին-Ագուլիսցի պ. Սարգիս Հախնազարեանին Նորին Սրբութեան շնորհակալութիւնն ու Հայրապետական օրհնութիւնը՝ կնոջ մահուան յիշատակին դպրոցական ֆոնդի օգտին մի հարիւր ռուբլի (100 ր). նուիրաբերելու առթիւ, որ յանձնուել է Մինասին։ 25 յունուարի, թ. 160։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին ներկայացնել Նորին Սրբութեան մանրամասն ցուցակ, թէ որ պետական դպրոցում ո՞վ է աւանդում կրօնի կամ հայոց լեզուի դասերը, քանի՞ դաս ունի մի կրօնուսոյց մի կամ մի քանի դպրոցում։ 25 յունուարի, թ. 163։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ամերիկայի Հայոց Առաջնորդ Տ. Աբսէն Տ. վարդապետ Վեհունուն, որպէս Առաջնորդի, նախ վերջին անգամ ի կարգ հրաւիրել թեմի ըմբոստ հայ հոգևորականութեան և թոյլ չտալ Մարգուկեսեան նախկին վարդապետին օրինակատարութիւն անել,

իսկ եթէ այդ միջոցն էլ չի օգնի և չի ազդի նոցա վրայ՝ այն ժամանակ դիմել նորին Սրբութեան, ուղարկելով Կրօնական Ժողովի այդ մասին կազմած արձանագրութիւնը։ 25 յունուարի, թ. 168։

ՄԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

18 դեկտմ., թ. 712. Մինօդը՝ Ատրպատականի Առաջնորդի միջնորդութեան համաձայն որոշեց. Վեհափառ Կաթուղիկոսի պատուէրի համաձայն ուղարկել Մ. Աթոռի գանձարանից մի տարի ժամանակով Ուրմիոյ փոխանորդ Տ. Խորէն վարդապետ Լազարեանին ամսական 30 ռուբլի, ի նկատի ունենալով Ուրմիոյ փոխանորդութեան ծայրայեղ նիւթական սուղ միջոցները։

18 դեկտմ., թ. 714. Մինօդը՝ քննութեան առնելով Մոզդոկի Դէորգ քհնյ. Փարեմուզեանի մեղադրութեան գործը՝ օտարին և վիճակային հասոյթների հաշիւների մէջ անհարազատ գտնուելու, Տէր-Ռափայէլեանի պսակը ճշտութեամբ չարձանագրելու և ծննդեան քաղուածները շրջաբերական մատեան չմուծելու ու եկեղեցու սպասաւորին պաշտօնից հեռացնելու համար, որոշեց. հաստատել Աստրախանի Կոնսիստորիայի որոշումը, որով Փարեմուզեան քհն. դադարում է քահանայագործութիւնից 2 ամիս ժամանակով։

20 դեկտմ., թ. 718. Մինօդը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի դեկտմ. 20-ի կոնդակի, որոշեց. պատուիրել Մ. Տաճարի լուսարարապետի օգնականին դեկտեմբ. 23-ին երդուեցնել Իջման ս. Սեղանի առաջ Զմիւռնիայի առաջնորդ Մատթէոս Ծ. վարդապետ Ինճէեանին՝ նոյն ամսի 24-ին եպիսկոպոս ձեռնադրելու համար։

27 դեկտ., թ. 728. Մինօդը՝ քննութեան առնելով Մերվի Աղէքսանդր քհնյ. Պոպովեանի և Արշակ քհնյ. Տէր Ոսկանեանի ու Ասխարատի Շմաւոն քհնյ. Աղբալեանի մեղադրութեան գործը, որոշեց. կարգել յիշեալ քահանաների դէմ